Ծուշանիկ Կուրղինյան

Ցավս ես քեզ մոտ չեմ երգել . . .

Ցավս ես քեզ մոտ չեմ երգել, չէ՛, չէ՛,
Ինձ գթալ պետք չէ,
Այդ ե՛ս անգանգատ կարող եմ գթալ,
Լքվածին սիրտ տալ . . .

Տրտունջս երբեք չի հասնիլ քեզ, չէ՛,
Ինձ խղճալ պետք չէ,
Այդ ե՛ս ցնորված, խղճալուն սովոր,
Չունիմ գեթ անդորր . . .

Քեզնից ես ժպիտ չեմ մուրալ, չէ՛, չէ՛,
Ինձ զիջել պետք չէ,
Իմ մոտից ոչ մի տնանկ ու աղքատ
Չի անցել վհատ:

Մնա ինձ համար որպես ջինջ երազ,
Որ չի մոռացվում .
Որպես մի աննյութ բաղձանքի աղբյուր—
Կյանքի զոհացում . . .

1914 թ, 9 հունիսի